

ԻՐԱՔԱՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔ

1974-ի երկրորդ կիսամյակին իրաքահայ հասարակությունը ականատես եղավ կրոնական նոր և շինիչ կարգադրություններու, որոնք հոգեկան հրճվանք պատճառեցին ժողովրդին բոլոր խավերուն և անոնց պատիվը կերթա թեմիս բարեջան առաջնորդ գերաշնորհ տ. Ասողիկ եպս. Ղազարյանին և թեմիս պատկառելի Ազգային կեդրոնական վարչության:

ԱՌԱՋՆՈՐԴԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Թեմիս Ազգային կեդրոնական վարչությունը գնահատելով առաջնորդ սրբազան հոր գեր. տ. Ասողիկ եպս. Ղազարյանի կրոնական և վարչական գործունեությունը միաձայնությամբ զայն թեմիս առաջնորդ վերընտրեց 1974 թ. սեպտեմբերի 30-ին: Հաջողություն և նորանոր նվաճումներ կը-ցանկանք սրբազան հոր:

ՔԵՐՔՈՒՔԻ ՀԱՅՈՑ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՀՈՎԻՎ

Քերքուքի հայոց եկեղեցին, որ շուրջ երկու տարիներե ի վեր թափուր էր չունենալով իր հոգևոր հովիվը, սրբազան հոր կարգադրությամբ և Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի բարեհաճությամբ ունեցավ իր նոր հովիվը, հանձին տ. Նարեկ քհն. Թնգրյանին: Տեր հայրը արդեն ստանձնած է իր նոր պաշտոնը: Հաջողություն և լավագույն մաղթանքներ նոր հովիվին:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Բասրայի հայոց եկեղեցին ևս օժտվեցավ նոր հովիվով մը, հանձին տ. Կարապետ քհն. Մենենճյանին, որուն քահանայական ձեռնադրությունը կատարեց առաջնորդ ս. հայրը Բաղդադի նորաօծ սուրբ Կարապետ եկեղեցվո մեջ, նորընծային տալով եկեղեցվո անունը: Նորընծան իր քառասունքի պատրաստության շրջանը անցնելե հետո նույն եկեղեցվո մեջ ստանձնեց արդեն իր նոր պաշտոնը:

Ձեռնադրությունից մի պահ

Ժողովրդանվեր գործունեություն և հաջողություն կմաղթենք նորընծա տ. Կարապետին:

ԶԱՎԵՆ ՔՀՆ. ՓՈԼԱՏՅԱՆ